



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԻ ԵՎ
ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

30 հունվարի 2017 թ. № 31 - Ա/1

ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՄՐՑԱՆԱԿԻ ՀԱՄԱՐ
«ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՄԱՐԶԻԿ» 2017 ԹՎԱԿԱՆԻ
ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻԿԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Նախագահի 2004 թվականի մայիսի 20-ի «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում Հանրապետության Նախագահի մրցանակներ հիմնելու մասին» ՆԿ-113-Ն կարգադրության 1-ին կետի «ե» ենթակետի՝ հրամայում եմ՝

1. Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետության Նախագահի մրցանակի համար «Հաշմանդամություն ունեցող լավագույն մարզիկ» 2017 թվականի մրցույթի կանոնակարգը՝ համաձայն № 1 հավելվածի.

2) «Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի № 1 հավելվածի № 1 աղյուսակի 08 բաժնի 01 խմբի 01 դասի «17. «Հաշմանդամություն ունեցող լավագույն մարզիկ» մրցույթի անցկացում» ծրագրի ծախսերի նախահաշիվը՝ համաձայն № 2 հավելվածի:

2. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի տեղակալ Խաչիկ Ասրյանին:



Հ. ՌՈՍՏՈՄՅԱՆ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՄՐՑԱՆԱԿԻ ՀԱՄԱՐ
«ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՄԱՐԶԻԿ»
2017 ԹՎԱԿԱՆԻ ՄՐՑՈՒՅԹԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Նախագահի մրցանակի համար «Հաշմանդամություն ունեցող լավագույն մարզիկ» մրցույթի (այսուհետ՝ Մրցույթ) կազմակերպման և անցկացման գործընթացները, սահմանվում են մրցույթին մասնակցելու կանոնները, մասնակիցների իրավունքներն ու պարտականությունները:

II. ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

2. «Հաշմանդամություն ունեցող լավագույն մարզիկ» մրցույթի նպատակներն են՝ հաշմանդամություն ունեցող անձանց առողջության ամրապնդում, առողջ ապրելակերպի ձևավորման գործում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի դերի բարձրացում, հաշմանդամություն ունեցող անձանց ակտիվ հանգստի կազմակերպում:

3. Մրցույթի խնդիրներն են՝

1) հաշմանդամություն ունեցող անձանց շրջանում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի քարոզում, հաշմանդամային սպորտի մասսայականացում.

2) ֆիզիկական կուլտուրայի և սպորտի միջոցով առողջ կենսակերպի գաղափարների արմատավորում և հասարակությանը նրանց լիարժեք ինտեգրում,

3) ակտիվ կենսակերպը հաշմանդամություն ունեցող անձանց շրջանում արմատավորելու նպատակով զանգվածային լրատվամիջոցների հետ աշխատանքի կազմակերպում:

III. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

4. Մրցույթի նախապատրաստման և անցկացման աշխատանքները համակարգում է Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն):

5. Մրցույթի կազմակերպչական աշխատանքներն իրականացնում է Նախարարության կողմից ստեղծված մրցավարական հանձնաժողովը՝ «Հայաստանի ազգային պարաօլիմպիկ կոմիտե», «Խուլերի հայկական սպորտային կոմիտե», «Հայկական հատուկ օլիմպիադաներ», «Հայաստանի կույրերի միավորում հաշմանդամների

հասարակական
աջակցությամբ:

կազմակերպություն»

հասարակական

կազմակերպությունների

IV. ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

6. Մրցույթին մասնակցում են լսողական, տեսողական, հենաշարժողական խնդիրներ և մտավոր սահմանափակումներ ունեցող Հայաստանի Հանրապետության մարզերի և Երևան քաղաքի հաշմանդամային հասարակական կազմակերպությունների անդամներ և անհատներ:

V. ԱՆՑԿԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԺԱՄԿԵՏԸ ԵՎ ՎԱՅՐԸ

7. Մրցույթն անցկացվելու է երկու փուլով,

1) 1-ին փուլը Հայաստանի Հանրապետության մարզերում և Երևան քաղաքում կազմակերպում և անցկացնում են Հայաստանի Հանրապետության մարզպետարանները և Երևանի քաղաքապետարանը հունիս ամսին.

2) 1-ին փուլի անցկացման մրցակարգը տեղերում որոշում են Հայաստանի Հանրապետության մարզպետարանների և Երևանի քաղաքապետարանի կողմից ստեղծված համապատասխան կազմկոմիտեները՝ ներգրավելով հասարակական կազմակերպություններին.

3) 2-րդ փուլի մրցումները կանցկացվեն «Ծաղկաձորի գլխավոր մարզահամալիր» պետական փակ բաժնետիրական ընկերությունում օգոստոսի 27-ից 30-ը:

8. Մրցույթն անցկացվելու է 7 մարզաձևերից՝ բասկետբոլ, սեղանի թենիս, շախմատ, բազկամարտ, շաշկի, դարթս և եռամարտ:

Անցկացվելու է՝

1) լսողական խնդիրներ ունեցող անձանց համար՝ եռամարտի մրցումներ, մասնակիցների թիվը՝ 12 տղա, 12 աղջիկ.

2) մտավոր սահմանափակումներ ունեցող անձանց համար՝ եռամարտի մրցումներ, մասնակիցների թիվը՝ 8 տղա, 8 աղջիկ և 4 ուղեկցող.

3) կույրերի շախմատի մրցաշար, մասնակիցների թիվը՝ 12 մարդ, 8 ուղեկցող.

4) բասկետբոլի մրցումներ՝ կմասնակցի 4 թիմ: Թիմի կազմը՝ 7 տղա, 1 ներկայացուցիչ:

9. Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր մարզից սեղանի թենիս, շախմատ, շաշկի, դարթս, բազկամարտ մարզաձևերից կմասնակցեն 4 տղա և 3 աղջիկ (տրվում է մարզաձևի ընտրության հնարավորություն), ընդամենը 7 մասնակից և 1 ներկայացուցիչ: Տեղերում թիմերի համալրումն իրականացնում են մարզպետարանների և Երևանի քաղաքապետարանի համապատասխան բաժինները՝ իրենց հայեցողությամբ:

10. Երևան քաղաքը սեղանի թենիս, շախմատ, շաշկի, բազկամարտ և դարթս մարզաձևերից կմասնակցի երկու թիմերով՝ N° 1 և N° 2:

1) N° 2 թիմը կմրցի միայն անհատական մրցաձևերում (թիմի անդամների ձեռք բերած միավորները թիմային հաշվարկի ժամանակ հաշվի չեն առնվի): Յուրաքանչյուր թիմի կազմը՝ 4 տղա, 3 աղջիկ և 1 ներկայացուցիչ, ընդամենը՝ 14 մասնակից և 2 ներկայացուցիչ:

11. Յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի մասնակցելու միայն մեկ մարզաձևում:

12. Մրցույթի անհատական մարզաձևում 1-ինից 12-րդ տեղերը որոշվում են հետևյալ կերպ՝